ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10 նոյեմբեր 2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան:
Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Վարդանյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց՝ գնանշման հարցում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Վարդանյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Բլաժ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են, և համապատասխանում են ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով սահմանված՝ մասնագիտական փորձառությունը հավաստող պայմանագրի (բացակայում է), իսկ Ա/Ձ Աբգար Ավետիսյանի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը գնումները համակարգողի էլ. Փոստին չի ուղարկվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառ. 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված < Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը:

03.11.2017թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, որտեղ նշված էր, որ «Բլաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՎՀՀ-ով որևէ կազմակերպություն հաշվառված չէ: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը վերանայելուց հետո պարզվեց, որ մասնակիցը ներկայացրել է սխալ ՀՎՀՀ, ինչի վերաբերյալ 03.11.2017թ. մասնակցի կողմից ներկայացվել էր դիմում՝ իր կողմից ներկայացված հայտի մեջ թույլ տված տեխնիկական վրիպակի մասին: Հանձնաժողովը որոշեց առաջացած խնդրի մասին տեղյակ պահել լիազորված մարմնին՝ խնդրելով տալ կարծիք-պարզաբանում՝ թե արդյոք վրիպակը բավարար հիմք է մասնակցի հայտի մերժման համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Վարդանյան)

Հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփումը հետաձգել՝ մինչև լիազորված մարմնի կողմից համապատասխան եզրակացության տրամադրումը: Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել եզրակացության ստացման օրը ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գնահատող Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գնահատող Տ.ՀԱՐՈՅԱՆ

Գնահատող Ս. ՆԻԿՈԼՅԱՆ

Գնահատող Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

Գնումները համակարգող՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

10.11.2017թ.